

Խորհրդացի Գիտնականներ «Բաց Նամակով» Մը Գերագույն Խորհուրդէն Կը Պահանջեն Արցախի Հարցին Արդար Լուծումը

Լենինկրատի Համամիութեանական գիտահետազոտական երկրարանական հիմնարկի աւելի քան յիսուն գիտնականներու խումբ մը, բաց նամակ մը յղած է Միութեան Գերագոյն Խորհուրդին պահանջելով որ Արցախի հարցը իր արդար լուծումը գտնէ Մարզին համաժողովրդական հանրաքուէի (20 Փետրուար, 1988) արդիւնքներու հիման վրայ, մեկնելով Խորհրդային Դաշնակցութեան ծիրին մէջ ազգերու ինքնորոշման իրաւունքի ճանաչումէն:

Գիտնականները իրենց մտահոգութիւնը կը յայտնեն, որ Սահմանադրական հիմքի վրայ հարցին ռամկավարական լուծման փոխարէն, ի գործ կը դրուին ճշնշումներ, ու փաստերու կանխամտածուած աղաւաղումով Խ. Միութեան եւ համայն աշխարհի հասարակութեան կը ներկայացուին ճշմարտութեան հակառակ իրողութիւններ: Հասարակութիւնը անտեղեակ կը պահուի նաեւ հայ ժողովուրդին վրայ Սովկայիթի մէջ փորձուած ցեղասպանութենէն:

Այս իրողութիւնը, կ'ըսեն գիտնականները, վնաս կը հասցնէ Խ. Միութեան վարկին, ու նաեւ կը վնասէ երկրին տնտեսութեան: Նամակագիրները կ'ըսեն նաեւ որ «հարցին փոխզիջողական լուծումներու» ամէն տարբերակ, ոչ այլ ինչ է, քան արդարութեան սկզբունքի ոտնահարում, փոխզիջութեան միակ թոյլատրելի տարբերակը ըլլալով Մարզին անյապաղ դուրս գալը Ատրպէյճանի կազմէն եւ զայն կապելը ուղղակի կեդրոնական Իշխանութեան: